Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 02 փետրվարի 2026թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ, 19-րդ և 22-րդ կետերը՝ կայացել է Կառավարման խորհրդի նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Համբարձում Մաթևոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Դավիթ Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բացակայում է՝	
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Տաթևիկ Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ 8, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Հ. Մաթևոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____ Վ. Բարսեղյան